8· (արևմտեան թևի վերայ) մեղաւորաց յիշատ
9· ակարան ինձ եւ ի մ(ոց) եւ որք աղաւթէք
(զ)մեզ յիշեցէք

Առաջին արձանագրութիւն, Առաջին տող. «տ՝ն» սղագրութեամբ. «Թեոդորոսի» բառի մէջ ոս միացած։ Երկրորդ տող. «Գնունեաց և «եպիսկոպոսի» բառերի մէջ, ու, պի, միացած։ Առաջնի Ռ-ի կամարի տակ մի գծիկ կայ, որ մտածել է տալիս, թէ կարող է բու լինել, որով «Գնթունեաց» կկարդացուի։ Երրորդ տող. «շինեցաւ», ընդգծուածը միացած, «ա՝ծաին» սղագրութեամբ։ Վեցերորդ տող սկզբից պակաս (Ք ս ա՝ ծ ?), «մեղաւոր» բառի մէջ «ղ» մաշուած։

Երկրորդ արձանագրութիւն, Առաջին տող. «Ա՝յ» սղագրութեամբ։
Հինգերորդ տող. «Ապահովեաց»—ընդգծուածը կապակցուած տեղ չլինելու պատճառով։

9. Գրիգոր Մամիկոնեանի արձանագրութիւնը Արուճի Ս. Գրիգորի արևելեան պատի վերայ, գրուած 668 թուին։ «Ի եւ Թ ամի Կոստանտնի» թուագրութիւնը համարում ենք ճիշդ (հակառակ. I Орбели. Багаванская Надпись 639 г. են. Христ. Востокъ Т. II. եր. 138—142)։ Արձանագրութեան մեծութիւնն է 127×62 սմ.։

Երկրորդ տող. «աւր» բառի մէջ r կոտրուած է։ Արձանագրութեան տակ «ողորմեա ք՝ս ա՝ ծ» յետին ժամանակի գրուածք է։

ի եւ Թ ամի Կոստանտնի մարե
ի ամսոյ որ աւ(ր) ԺԵ եւ Ե հիմն
արկեցաւ սուրբ կաթողիկէս
ի ձեռն Գրիգորի Մամիկոնեանի
Հայոց իշխանի եւ Հեղինէ
ի նորին զուգակցի
ի բարեխաւսութիւն շինաւ
ղաց զսա։

10. Արտաւազդ Կամսարականի տապանի արձանագրութիւնն է։ Կարծում ենք Հրահատայ որդի Արտաւազդը Ներսեհ Կամսարականի թոռն էր և վախճանուել է Ը. դարու առաջին քառորդին (Տես և Էջմ. և հայ հնագոյն Եկեղ. Մեսրոպ վրդ. եր. 105)։ Տապանի վերին մասը բութ օրօրոցաձև է, որ յատուկ էր արաբական շրջանի գերեզմաններին։ Երկարութիւնն է 2 մ. 47 սմ., իսկ արձանագրութիւնը (կափարչի հարաւ նայող կողի վերայ) 75×50 սմ.։ Վերարտադրութիւնը շատ անբաւարար է, կորած են տառերի բնորոշ և նուրբ գծերից շատերը. լուսանկարուած է էստամբաժից, անյարմար պայմաններում։ Գերեզմանը գտնուում է գեղնայարկ կամարի տակ։